

մանելու եմ ես, իսկ XIX և XX դարերի բաժինը՝ Պալ Սալմաշին:

Վերջերս մի նոր աշխատանք է սկսվել: Կազմվում է հայկական նովելների մի հատընտիր: Քե՛ն դրա թարգմանությունը կատարվելու է ուսանելից, սակայն նրա թարգմանիչը մեր լավագույն արձակ-թարգմանիչն է՝ Ի. Մակկային և, բացի դրանից, հրատարակչի հետ համաձայնեցված է, որ կատարված թարգմանությունը հայերեն բնագրի հետ համեմատելու համար պետք է տրվի Պալ Սալմաշին: Դա, մեր կարծիքով, կապահովի թարգմանության հարազատությունը:

Վերջ ներկայացված թվարկումը բեզամենը համառոտ մի ակնարկ է մեր կողմից կատարած աշխատանքի մասին: Մենք հույս ունենք, որ ժամանակի ընթացքում հայագիտության առանձին բնագավառը Հունգարիայում նորից հարուստ ծագիկներ պիտի տան:

Նրբ մենք մի քանի տարի առաջ, հունգարական ակադեմիայի հանձնարարությամբ, կազմում էինք հայագիտության զարգացման 15-ամյա պլանը, առաջին հերթին ի նկատի չինք առնում գիտական առարկաները: Այժմ մենք ուրախ ենք, որ ժամանակի ընթացքում հայկական մշակույթի ժողովրդականացումը այդքան արագ կերպով առաջադիմեց, Հիրավի, հունգար ժողովուրդը ուրախությամբ է ընդունում հայկական մշակույթի և գրականության պատկերները:

Հայագիտական մեր աշխատանքները Հունգարիայում նպատակ ունեն ոչ միայն մեծացնել հետաքրքրությունը հայոց պատմության և հայ մշակույթի նկատմամբ, այլև ավելի ամրապնդել հայ և հունգար ժողովուրդների բարեկամությունը, որի ակունքները զնում են դեպի դարերի խորքը:

Պրոֆ. է. ՇՅՈՒՑ (Բուդապեշտ)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

STUDIA ET ACTA ORIENTALIA, III, 1960. *Bucurest, Meridiens Editions*, 1961. p. 355 (Société des Sciences Historiques et Philologiques de la R. P. R.—Section d'Etudes Orientales).

Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության պատմական և բանասիրական գիտությունների Ընկերության Արևելյան ուսումնասիրությունների բաժանմունքի հանդեսի հերթական երրորդ համարը բովանդակում է արևելագիտական և որոշ չափով էլ հայագիտական ուսումնասիրություններ:

Հանդեսի «Հաղորդումներ և մատենագիտական ծանոթություններ» բաժնում զբախոսված են շուրջ 30 արևելագիտական ամսագրեր և զրքեր, այդ թվում նաև Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Ս. Անասյանի զրքերը: Հայագիտական տեսակետից հետաքրքիր են Վլադ Բրնըցյանուի, Հ. Ճ. Սիրունու և Դավիթ Ղժրիկյանի աշխատությունները, «Մխիթար Գոշի Դատաստանագրքի հայերեն մեկ ձեռագիրը» (էջ 47—63) հոդվածում Դավիթ Ղժրիկյանը նկարագրում է Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության ակադեմիայի գրադարանում պահված № 90/936 մեծածավալ ձեռագիրը և այն համեմատում բազմաթիվ այլ ձեռագրերի հետ: Հեղինակը քննարկում է շատ հարցեր, այդ թվում՝ օրենքների այդ ժողովածուի նշանակությունը միջնադարյան Հայաստանում և Լեհաստանի, Մոլդավիայի ու Տրանսիլվանիայի հայերի կյանքում և այլն: Հոդվածագիրը նշում է, որ 492 էջանոց ձեռագրի 283—407 էջերը բովանդակում են Մ. Գոշի Դատաստանագիրը, մնացած էջերում գտնվում են հատվածներ կրոնական զանազան տեքստերից:

Շահեկան են նաև ժողովածուի 65—91 էջերը, որտեղ տպագրված է Գլիա Բրնըցյանուի «Ուրարտական արվեստը՝ ըստ Սովետական Հայաստանում կատարված հնագիտական պեղումների» հոդվածը: Հոդվածագիրը մանրամասն նկարագրել է ուրարտական ճարտարապետության, քանդակագործության և բրոնզյա դեկորատիվ քանդակագործության բազմաթիվ նյութեր: Տպագրված են նաև ուրարտական արվեստի նմուշներից 12 նկարներ:

Հանդեսում հրապարակված են Հ. Ճ. Սիրունու «Կոստանդնուպոլիս քաղաքի անունը հայերեն և թուրքերեն բնագրերում» հոդվածը և «Մի հայտնագործություն Հայաստանում Զվարթնոցի տաճարի վերաբերյալ» հաղորդումը:

Վլադ Բրնըցյանուի «Կատարուզան՝ հայ-թաթարական տեղանուն» արժեքավոր հաղորդման մեջ ցույց է տրված, որ վիճելի է այդ տեղանունը միայն թաթարական ծագումով բացատրող գիտնականների կարծիքը, քանի որ 1064 թ., Բագրատունյաց թագավորությունը սելջուկ թուրքերի կողմից զրավվելուց հետո, հայերը թաթարներից առաջ Ղրիմի վրայով անցել են Մոլդավիա և Լեհաստան, որտեղ հատկապես XIII դարից սկսած նպաստել են քաղաքների տնտեսական զարգացմանը և XIII դարից այդ անունը զործածել են նաև իրենք:

**ՀԱՅԿԱՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ. Մխիթարյան Մատենադարան Զե-
նագրաց: Հատոր Ա. ՎԼԵՆՏԻՆԿ, Ս. Ղազար, 1966:**

Մխիթարյան միաբանությունը իր գոյության ավելի քան 260 տարիների ընթացքում դարձել է մշակութային կենտրոն, ուր հավաքված է շուրջ 4000 ձեռագիր: «Հայկական մանրանկարչու-
թյունը» առաջինն է այն շարքից, որը նվիրված է ս. Ղազարի Մատենադարանի հնագույն ձեռ-
գրերի մանրանկարչությանը:

Այս մեծագիր հրատարակությանը աշխատակ-
ցել են Սիրարփի Տեր-Ներսեսյանը (Փարիզ),
Բ. Տետեյանը (Փարիզ), Շ. Տետեյանը (Փարիզ),
Յ. Ֆեյդին (Փարիզ), Բ. Գրբաբյանը (Նյու-
Յորք), Լ. Քյուրտյանը (ԱՄՆ), Լ. Մ. դը Դյու-
րանը (Մոնթեալ), ինչպես նաև Վենետիկի ս.
Ղազարի հայկական ճեմարանի անդամներ Կ.
Բիպարյանն ու Մ. Ծանաշյանը, Ն. Տեր-Ներ-
սեսյանն ու Պ. Անանյանը:

Առաջին հատորում օգտագործված են ձեռա-
գրատան 13 հնագույն ձեռագրերը՝ Մլքե թա-
գուհու (IX դար), Տրապիզոնի (X դար), Աղ-
թիանուպոլսի (XI դար), Հոռոմոսի (XII դար)
ավետարանները և այլ ձեռագրեր (Սաղմոսա-
րան, Մաշտոց, Գիրք Ձեռնադրությանց):

Գրքի ընդարձակ ներածությունը (էջ 5—62)
գրել է հ. Մեսրոպ Ծանաշյանը, որը միաժամա-

նակ հանդիսանում է այս արժեքավոր աշխատու-
թյան հրատարակիչը:

Հատորում տպագրված նմանահանությունները
կատարված են բնագրերից ըստ իրենց ներկա
վիճակի և մեծ մասով համապատասխանում են
իրական չափերին: Գրքում ընդգրկված են 84
պատկերադասարաններ (121 նկարներով), ու-
րոնցից տասը ներկայացնում են զարդագրերի և
լուսանցազարդերի նմուշներ:

Գրքի նախաբանում Սիրարփի Տեր-Ներսես-
յանը տալիս է IX—XIII դարերի հայ ձեռագրա-
կան զարդարվեստի համապատկերը: Նախաբանի
վերջում գրված է. «Հրատարակված գործերը
բավարարորեն կներկայացնեն զեղարվեստական
գլխավոր հոսանքները Թ—ԺԳ դարերուն, Բախ-
տավոր ենք տեսնելով հոն, հին շրջանին համար,
տաղանդավոր արվեստագետներու գործերուն
հոյակապ օրինակներու Արվեստի պատմությամբ
զրազոզները երախտապարտ պիտի ըլլան հարգո
Մխիթարյան հայրերուն և Լ. Մ. Ծանաշյանին,
որոնք ձեռնարկած են այս կարևոր աշխատան-
քին, գունատիպ պատկերատախտակներուն խը-
նամոտ տպագրությամբ»:

**ՊՈՂԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ: Մայր ցուցակ Զեռագրաց Սրբոց Հակոբյանց: Հա-
տոր առաջին: Երուսաղեմ, Տպարան Սրբոց Հակոբյանց, 1966: 676 էջ, նկա-
րազարդ:**

Նորայր Սրբազանի շնորհալի և բարեխիղճ
աշխատանքի արդյունքն է այս հատորը, որը
լույս է տեսել Գալուստ Կյուլպենկյան հիմնադ-
րության հայկական մատենաշարով:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանու-
թյան ձեռագրերի մայր ցուցակի այս առաջին
հատորում նկարագրված են 240 ձեռագրեր, ու-
րոնցից հարյուրը լույս էր տեսել 1953 թ. հրա-
տարակված ցուցակի երկրորդ հատորի երկրորդ
տպագրության մեջ, իսկ 140 ձեռագրերը նկա-
րագրված են Ն. Պողարյանի կողմից առաջին
անգամ:

Բացի հատորի հիմնական մասից (էջ 1—

650), որտեղ գտնվում են ձեռագրերի նկարա-
գրությունները, գրքում կան բազմաթիվ օժան-
դակ ցանկեր և տեղեկատվություն, ինչպես, օրի-
նակ՝ «Տեսակավորյալ բովանդակությունը», ղեր-
քում նկարագրված ձեռագրերի ժամանակագրա-
կան ցուցակը, հատուկ անունների ցանկը և այլն:

Գրքում նկարագրված ձեռագրերը վերաբերում
են VIII դ. այս կողմ ընկած ժամանակաշրջանին
և հիմնականում ունի պատմական, մատենա-
գրական, աստվածաբանական, լեզվաբանական,
յարրոյական, բժշկական, աշխարհագրական,
կրոնական, համայնագիտական և այլ բովանդա-
կություն:

**EAST ARMENIAN READER. Selected and Edited by Paul Essabal.
Berkeley, University of California, 1966, 379 pp.**

Բանասիրական և բանագիտական աշխատու-
թյունների հեղինակ Պողոս էսապալյանի վեր-
ջերս լույս ընծայած աշխատությունն է, որը վեր-
նագրված է «Արևելահայերենի ընթերցարան»:
Գիրքը կազմված է արևելահայերեն, իբրև ձեռ-
նարկ անգլիախոսների համար:

Վիեննայի համալսարանում դիտական աս-
տիճան ստացած հեղինակը 1960 թ. հայոց լե-
զու, գրականություն և պատմություն է դասա-
վանդում Կալիֆորնիայի համալսարանում (Բեր-
կլիում): Գրքի ներածականում համառոտակի
ներկայացված է հայոց դրի ու գրականության

անցած ուղին՝ Մ դարից մինչև մեր օրերը, տեղեկություններ են տրված հայ տպագրության կարևոր օջախների մասին, ինչպես նաև արևմտահայերենի և արևելահայերենի զարգացման տարբեր շրջանների մասին:

Գիրքը բազկացած է երեկու մասից: Առաջին մասը ընթերցարանն է, որտեղ զետեղված են կարճ տեքստեր՝ բառերի բացատրություններով: Գրքի երկրորդ մասում տեղ են գտել համեմատաբար ավելի երկար տեքստեր, որոնց բառերի բացատրությունները տրված են հայերեն:

Դասագրքի զանազան նյութեր որոշ տեղեկություններ են տալիս հայ ժողովրդի մշակույթի տարբեր բնագավառների և Սովետական Հայաստանի վերելքի մասին: Որպես արևելահայերենի դասական օրինակներ բերված են Բաֆֆու, Հովհաննես Թումանյանի, Շիրվանզադեի, Եղիշե Ջառենցի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Ջորյանի, Վախթանգ Անանյանի և ուրիշների ըստեղծագործությունները: Ընթերցարանի վերջում (էջ 259—377) զետեղված է հայերեն-անգլերեն բառարան:

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳԱԼՅԱՅԱՆ ՏԱՆ: 1866—1966: Պատրաստեցի՞ն՝ Հակոբ Զիմար և Պերճ Էրզիյան: Իսթանբուլ, 1966: 304 էջ, նկարազարդ:

Գալֆայան աղչկանց որբանոց-դպրոցի մեկ-դարյա պատմության ամփոփագիրն է, որ ընդգրկված է այս հատորի մեջ:

Հուշամատյանում առանձին գլուխներ են հատկացված որբանոցի հիմնադրման, նրա հետագա զործունեության, աշխատանքների հարատևման գործին նպաստողների, խնամակալությունների և ուսումնական զործունեության վերաբերյալ:

Ժողովածուում կան նաև Գալֆայան որբանոցի առօրյայի, նրա հորելյանական տարիների վերաբերյալ նյութեր, վիճակագրական և հաշվետու տեղեկագրեր: Գրքում զետեղված են տեղեկություններ Գալֆայան տան նախկին սանուհիների մասին և պոլսահայ մտավորականների հուշագրությունները այդ հաստատության հարյուրամյակի առթիվ:

MISKIGIAN I., *Manuale Lexicon Armeno-Latinum*. Roma, Sacra Congregatio de Propaganda Fide, 1887, XXVIII, 484 p. Reproduction anastatique 1966.

Բառարանագետ Հովհաննես Միսքճյանի հայերեն-լատիներեն առձեռն բառագիրքն է, որ լուսատիպ վերահրատարակված է 79 տարի անց: Ուրբանյան դպրոցի և Հոռմի կղերանոցի հայոց լեզվի ուսուցիչ Հ. Միսքճյանը այս բառարանը

պատրաստել է դպրոցների համար: Բառարանն ունի ներածական, ինչպես նաև հայոց լեզվի վերաբերյալ քերականական տեղեկություններ տվող բաժիններ:

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՍԻՎՐԻ-ՀԻՍԱՐԻ ՀԱՅՈՑ: Տեղագրական, պատմական և ազգագրական: Աշխատասիրեց Գրիգոր Տեր-Հովհաննեսյան: Նախաձեռնեց ղոկալ: Միմրան Ներսեսյան: Բեյրութ, Տպարան Մշակ, 1965: 688 էջ, նկարազարդ:

Այս հուշամատյանը աշխարհագրական, պատմական, ազգագրական, բարրառագիտական, ինչպես նաև կրթական ու մշակութային ընդարձակ տեղեկություններ է պարունակում Սիվրի-Հիսարի հայերի անցյալ կյանքի մասին:

Սիվրի-Հիսարը Փոքր Ասիայի հյուսիսային մասում գտնվող հայտնի մի բնրդաբաղա էր, անցյալում բաղամարդ հայաբնակ թաղերով: Գրքում փաստագրական ու հուշագրական լայն տեղեկություններ կան Սիվրի-Հիսարի վերաբերյալ: Առանձին գլուխներ են հատկացված համայնքի հասարակական ու քաղաքական կյանքին, կրթական գործի կազմակերպման ու թեմական բարեկարգության, ինչպես նաև մշակութային զանազան բնագավառներին:

Ժողովածուում մանրամասն տեղեկություններ և հուշեր կան 1915—1919 թթ. տեղահանություն-

ների, բաղամարդ հայ ընտանիքների ողբերգական արքայի մասին: Գրքում առանձին ուսումնասիրության նյութ են դարձել նաև Սիվրի-Հիսարի քարառը, Սիվրի-Հիսարցի կինը, բարձրն ու սովորությունները: Հուշամատյանում ներկայացված են տարբեր զաղթօջախների հայրենակցական միությունները, Սիվրի-Հիսարի անցյալի պատմական ու նշանավոր անձնավորությունները և մեծ եղեռնի զարհուրելի դեպքերից վերապրածների կենսագրությունները:

Գրքի վերջում ֆրանսերեն և անգլերեն լեզուներով հավելված է կցված հայերի ցեղասպանության հիսնամյակի մասին:

Գիրքը նկարազարդված է շուրջ 1600 նկարներով, ունի քարտեզներ: